

Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմի այցը

Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջան

Մեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը երկօրյա այցով Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմը՝ փոխտնօրեն Հասմիկ Ղազարյանը և համալրման բաժնի վարիչ Անժելա Սամսոնյանը այցելեցին Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջան: Մեղրու կենտրոնական գրադարանում տեղի ունեցավ հանդիպում գրադարանավարների հետ: Շրջայցի ընթացքում գրադարանի տնօրեն Էմմա Ավետիսյանը ներկայացրեց գրադարանի աշխատանքները և հետագա ծրագրերը: Գրադարանավարների հետ անցկացվեց սեմինար-խորհրդակցություն գրադարանային խնդիրների շուրջ: Հանդիպմանը մասնակցում էին նաև Մեղրու քաղաքապետարանի բաժնի վարիչ Սիրուն Սարգսյանը և աշխատակազմի ղեկավար Սվետա Հակոբյանը: Մեղրու քաղաքապետարանը մեծ հոգածությամբ աջակցում է կենտրոնական գրադարանին՝ մեծապես նպաստելով գրադարանային գործի զարգացմանը , գրադարանի և ընթերցանության դերի բարձրացմանը: ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նվիրաբերվեց 400 միավոր գրականություն Սյունիքի սահմանամերձ համայնքների գրադարաններին: Հայաստանի Ազգային գրադարանի կողմից նվիրաբերվեց 409 միավոր գրականություն Մեղրու կենտրոնական, մանկական և համայնքային 7 գրադարաններին՝ Լիճք, Վարդանիձոր, Լեհվազ, Տաշտուն, Կարճեվան, Ալվանք , Մեղրի: Սյունիքի մարզային գրադարանին տրամադրվեց 19 միավոր գրականություն մերժումների ցանկից: